ՄԱՀ, ԹԱՂՈՒՄՆ ՈՒ ՄԵՌԵԼՈՑ

—

Սրանք էլ են հաւատում, թէ մարդու մահուան օրը նախապէս որոշուած ու գրուած է ճակատին, և որ ոչինչ չի կարող հեռացնել կամ մօտեցնել նրան։ Ընդունում են նոյնպէս, որ ամեն մի մարդ մի աստղ ունի երկնքում, երբ օրը գալիս է, աստղն ընկնում է և մարդն էլ մեռնում։

Մեռնելու ժամին, եթէ մեռնողը բարի է, բարի հրեշտակն է գալիս, իսկ թէ չար՝ չարն է գալիս հոգին առնելու։ Բարի մարդը հանգիստ ու թեթև է հոգին աւանդում, իսկ չարը դժուար, ու տանջուելով։

Երբ մէկը մեռնում է, տանը իրարանցում է ընկնում. տնեցիները սաստիկ լաց ու կոծ են բարձրացնում. հարևանները գալիս մեռելի երեսը ուղղում են դէպի արևելք, շորերը հանում, աչքերը ծածկում, ձեռքերը կրծքին խաչաձև ծալում, ապա լողացնում և պատանքի մէջ փաթաթում։

Մեռելը նոյն օրն և եթ թաղում են, առանց օրերով սպասելու, աշխատելով արևը մայր չմտած՝ մեռելը հողին յանձնել։

Սովորաբար մեռելը դնում են «ճաղրի» (նաժ) մէջ, դագաղ չեն շինում։ Թաղելու ժամանակ՝ մեռելը «ճաղրից» հանում են և այնպէս են դնում, «ճաղրը» թողնում գերեզմանի թմբին։ Մեռնողների համար յատուկ պատարագ չեն անել տալիս։ Ցան կարգը կատարելուց յետոյ, ուղղակի տանում են գերեզմանատուն, երբեմն միայն առաջ եկեղեցի են տանում, բայց էլի պատարագ չեն անել տալիս. մի «հոգւոց» էլ այնտեղ են ասում և ապա այնտեղից տանում հանգստարան։

Մեռելի լողացրած տեղը ոչ մոմ են վառում, ոչ կանթեղ, ոչ էլ վերցնելուց յետոյ քար դնելու սովորութիւնն ունին։

Նոյնպէս չկան նրանց մօտ յատուկ հրաւիրուած լալկան

կանայք։ Բարձր ձայնով լալիս են աւելի մօտիկ ազգականները, իսկ սովորաբար ցածր ձայնով բոլոր կանայքն էլ լռիկ, մնջիկ մասնակցում են։ Նրանց կանայք մինչև գերեզմանատուն հետները գնում են. սպասում են մինչև մեռելի հողի մէջ դնելը, ապա վերադառնում են, առաջուան պէս ամբողջ ճանապարհին, մինչև տուն հասնելը, լաց ու կոծ անելով։

«Ճաղրը» տանում են ձեռքերով մի քամի հոգի, ճանապարհին շուտ-շուտ փոխուելով։ Ամեն մէկը իր պարտքն է համարում մօտենալ «ճաղրին» և օգնել տանելուն։

Սովորաբար նրանց մօտ գերեզման փորում են հարևանները, ձրի։ Փորում են սովորական խորութիւնով ու լայնութիւնով. մօտ 2 արշին խորը և 1 արշին լայնութիւնով, նայած տակի հողի յատկութեան ու շերտին։

Մեռելը գերեզման դնելուց առաջ ազգականները մօտենում, համբուրում են ու լաց լինում։ Յետոյ հանում են «ճաղրից» և այնպէս իջեցնում հողը։ Քահանան օրհնում է հողը մօտիկ ազգականի ձեռքում և գցել է տալիս գերեզմանի մէջ։ Նրան հետևում են բոլոր յուղարկաւորները, մի-մի բուռ հող գցելով մեռածի վրայ, ասելով՝ «Ստուած օղորմի հոգուն»։ Գերեզմանը հողով լցնելուց յետոյ, վրան թումբ են շինում, «ճաղրը» վրան թողնում։

Թաղման կարգը կատարելուց յետոյ բոլոր յուղարկաւորները նստում են գերեզմանին մօտիկ, ննջեցեալի տնից բերած հոգեհացը ուտելու։ Հոգեհացի համար առանձին մեծ պատրաստութիւններ չեն տեսնում. ոչ եզ են մորթում, ոչ էլ ոչխար։ Տանում են ինչ որ իրանց տանը գտնուում է. շատ-շատ դրսից բրինձ են առնում, փլաւ եփում, հասարակ կամ կաթով, հետը վերցնում մածուն, ձուածեղ, բարակ հաց՝ եթէ ուտիս է, իսկ պասին պասուց բաները՝ թթու, սոխ, լոբիա և այլն. գինի ու օղի չեն առնում։ Հացն ուտելուց յետոյ ցրւում են ամենքը, կրկնելով իրանց օրհնութիւնը մեռածի հոգուն, և մխիթարելով մնացողներին, գնում են իրենց գործի, դրանով էլ վերջանում է ամեն բան։ Այնուհետև ոչ գերեզման են գընում-գալիս. ոչ առաւօտ-իրիկուն մինչև ութ օր եկեղեցի,

ոչ գերեզմանի հող քսել և այլն։ Մարմինը հողին յանձնելուց յետոյ սովորաբար ամեն բան վերջանում է, միայն Տրապիզոնի մօտերքից եկած գիւղացիներն են, որ թաղելուց յետոյ էլի մի երկու-երեք օր առաւօտները գալիս այցելում են գերեզմանը, լալիս, աղօթում, խունկ ծխում, ննջեցեալին լիշում և նորից տուն գնում. միւսները այդքան էլ չեն անում։

Համշէնցիների սովորութիւնով գերեզմանօրհնէք կամ մեռելոց կատարում են տարին մէկ անգամ, Զատկի շաբթին, սկսած երկուշաբթի օրից մինչև Նոր կիրակին։ Այդ շաբթին ամեն մի գիւղ ջոկ-ջոկ մեռելոց է անում, և որովհետև ամեն մի գիւղի մեռելոցի հանդէսին միւս գիւղերից գնացողներ են լինում, դրա համար մօտիկ գիւղերը առաջուց իրար մէջ որոշում են մեռելոցը կատարելու օրը, այնպէս որ իրար չեն խանգարում։ Մեռելոցը մեծ հանդէսով են կատարում. այդ օրը ամեն տնից կերակուր է գնում եկեղեցի, կաթ, մածուն, փլաւ, ձուածեղ, խմորեղէն և այլն, ինչ որ գտնուում է գիւղում։ Կէսօրին մօտիկ քահանան տիրացուներով գնում է հանգստարան, չորս կողմը դառնալով միանգամից օրհնում է բոլոր մեռելներին, և ապա գալիս է, սեղան են դնում. բոլոր ուտելիքները մէջտեղն են բերում։ Քահանան օրհնում է և բոլորը միասին նստում են հացի, տղամարդիկ առանձին, կանայք առանձին։ Ճաշից յետոյ երբեմն գօտեմարտ են անում կամ նուագում, պարում են և ապա երեկոյեան ցրուում տները։

Մեռելների վերաբերմամբ կան հետևեալ նախապաշարումները։

1. Նոր փորած գերեզմանի հողը եթէ շուտ իջնի, հաւասարուի, նշան է որ մեռելը արդար է եղել։

2. Կատուն որ մեռելի վրայից անցնի, մեռելը «խօրթաղ» կը դառնայ։

3. Սպանուածի հոգին իսկոյն ուղղակի տեղը չի հասնում, սպասում է մինչև նախասահմանուած ժամանակի լրանալը, որ նշանակուած է եղել սպանուողի կեանքի համար։ Երբ խրփում է այդ ժամը, նա էլ այն ժամանակն է տեղը գնում։

4 Երբեմն հիւանդի համար կարծում են, թէ մեռելից վա-

խած կըլինի։ Այդ տեսակ հիւանդին տանում են Հանգստարան, նրա շուրջը 3 անգամ ման բերում և 3 անգամ ծունը չոքեցնում, ասել տալով «իմ ցաւիցս դուք առէք, օր ես պէտքընում (լաւանամ)։

5. Մեռելատանը մինչև մէկ տարի ոչ թուխս կը դնեն, ոչ շերամ կը պահեն։ Թխսի տակից ելած ձագերը գետինը կը փորփորեն և փորած հողը մեռելի աչքերը կը լցուի, իսկ շերամի քաշած թելը աչքերը կը կապէ, երկու դէպքումն էլ մեռելը հանգիստ չի լինիլ։

6. Ցուղարկաւորութեան միջոցին եթէ մեռելի վրայ անձրև կաթէ՝ 40 օր անձրև կը գայ։

7. Մեռելից էլ կարող է «կեօխ» լինել։ Եթէ մէկը նոր ննջեցեալի տնից մի ուրիշի տուն է գնում, անպատճառ նրանց կ'զգուշացնի, որ վեր կենան ոտի կանգնեն։ Առաջ եկողը պիտի նստի, յետոյ տնեցիք. թէ չէ տնեցիք բոլորն էլ կը հիւանդանան, «կեօխ կը բռնուեն»։

8. Երաշտի ժամանակ անձրև բերելու համար, կտրում են մի նոր մեռելի գլուխ, ամուր թոկով կապում են և գցում ծովը. բայց գլուխը ծովում չեն թողնում, թէ չէ սարսափելի հեղեղ կը գայ։

9. Մի ազգիւրից թէ որ երկու հոգի միասին ջուր խմեն, միաժամանակ էլ կը մեռնեն։

10. Նոյնպէս միասին հաց ուտելիս՝ վերջացնելուց յետոյ գդալները իրար հետ միաժամանակ պէտք չէ ցած դնել, թէ չէ միաժամանակ էլ կը մեռնեն։

11. Տնից փայտը ուսին դուրս գնալը լաւ չէ. տնից մեռել կը լինի։

12. Ցան չորս կողմը որ պտոյտ գան, հայրն ու մայրը կը մեռնեն։

ՀՈԳՈՒ ԵՒ ՀԱՆԴԵՐՁԵԱԼ ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Համշէնցի հայը ընդունում է, որ մայն էլ մարդու պէս հոգի ունի. մայը որ հոգի չունենար, ինչպէս պէտք է ապրէր։ Նա մայերին և առհասարակ կենդանի արարածներին ան-